«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Շարադրություն և փոխադրություն գրելու մեթոդիկայի մշակումը
ԱՌԱՐԿԱ	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ	Սոֆա Պոլատովա
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Մահարու անվան հ.176 հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
ԳԼՈՒԽ 1. 5
Փոխադրություն. 5
1.1 Տեսակները: 5
1.2 Անցկացումը: 8
ԳԼՈՒԽ 2 11
Շարադրություն. 11
2.1. Տեսակները: 11
2.2. Անցկացումը: 15
Եզրակացություն 17
Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Այս հետազոտական աշխատանքի **նպատակն է** մեկնաբանել և հիմնավորել կրթության շրջանակներում հասարակության մեջ անկաշկանդ ու նպատակահարմար հաղորդակցվելու, սեփական մտքերը բանավոր և գրավոր շարադրելու, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խոսքային գործունեություն իրականացնելու արդյունավետ ուսուցման դերը, ինչպես նաև բացահայտել ու զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակություններն ու երևակայական մտածողությունը: Այս արդյունքին հասնելու համար կարևոր է զարգացնել փոխադրություններ և շարադրություններ գրելու ունակությունը:

Այսօրվա դպրոցում էական շատ փոփոխություններ են կատարվել: Առաջին պլան են մղված խոսքը ձևակերպելու, մշակելու հմտությունները և կարողությունները: Փոխված են դպրոցում դասավանդման հայեցակարգը, ուսումնական ընդհանուր նպատակները, առարկաների բովանդակային ընդգրկումը, ծրագրերն ու ժամաքանակները: Փոխվել են նաև աշակերտների գիտելիքները ստուգելու ձևերը: Ուսուցիչները մեծ մասամբ կիրառում են թեստային և հարցարանային աշխատանքներ՝ հետին պլան մղելով փոխադրությունն ու շարադրությունը: Իսկ դա հանգեցրել է նրան, որ այսօր հանրակրթական դպրոցների շատ աշակերտներ դժվարանում են շարադրություններ գրել, իրենց մտքերը, դատողությունները, զգացածը, տեսածն ու լսածը գրագետ շարադրել կամ պատմել: Դա բացատրվում է նաև նրանով, որ վերջին շրջանում ավարտական և բուհերի ընդունելության քննությունները անցկացվում են թեստերով, որոնք ստեղծագործական աշխատանք չեն պահանջում, չեն նպաստում աշակերտների պատկերավոր,գեղեցիկ,արտահայտիչ խոսքի զարգացմանը: Աշակերտները գրում են ուղղագրական ,կետադրական,ոճական սխալներով: Նրանք վարժվել են հեշտ ճանապարհով գնահատական ստանալուն և չեն ուզում մտածել: Ասվածից չպետք է եզրակացնել,որ ես դեմ եմ թեստային առաջադրանքներին կամ դրանք չեմ կիրառում:

Ուսումնական տարվա ընթացքում կիրառում եմ գրավոր աշխատանքի տարբեր տեսակներ՝ արտագրությունից ու թելադրությունից մինչև փոխադրություններ ու շարադրություններ, համառոտ զեկուցումներ ու ռեֆերատներ՝ ամեն դասարանի համար մշակելով առանձին համակարգ: Սակայն սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման բազմաթիվ միջոցներից առանձնացնում եմ ստեղծագործական գրավոր աշխատանքները՝ հիմնականում աչքի առաջ ունենալով փոխադրությունն ու շարադրությունը: Համոզված պնդում եմ՝ դրանք իրենց

ենթատեսակներով սովորողների ստեղծագործական ունակություններն ու բառապաշարը զարգացնելու, քերականական նյութը գործնական միջոցներով յուրացնելու լայն հնարավորություններ են տալիս, նպաստում գրավոր ու բանավոր խոսքի զարգացմանը,նրանց գեղագիտական ճաշակի բարձրացմանը: Դժվարությունը միայն այն է,որ այս գրավորներին հատկացվում է մեկ դասաժամ:

Ստորև կներկայացնեմ փոխադրության և շարադրության տեսակները և դրանց անցկացման մի քանի կանոններ ու օրենքներ:

ԳԼՈՒԽ 1.
Փոխադրություն.

1.1 Տեսակները:

Աշակերտի գրավոր և բանավոր խոսքի զարգացման լավագույն միջոցներից մեկը փոխադրությունն է: Փոխադրություն գրելիս աշակերտները վերարտադրում են գրական որևէ ստեղծագործության կամ հատվածի բովանդակությունը: Այս տեսակի գրավոր աշխատանքը նախահիմք է հանդիսանում վերլուծական-քննադատական շարադրությունների համար:Պետք է նշել ,որ փոխադրություններ անցկացնելու լայն հնարավորություններ են մեզ տալիս փոխադրության նյութերի ժողովածուները,որոնցում մեծ ուշադրություն է դարձված նյութերի ծավալին՝ յուրաքանչյուր դասարանի բաժնում ընդգրկելով որոշակի բառաքանակով բնագրեր կամ հատվածներ: Միաժամանակ կարևորվել է ընտրված նյութերի դաստիարակչական նշանակությունը, դրանց հետաքրքրականությունը, տեղեկատվական բնույթը: Նյութերը տարատեսակ են ու բազմազան և նպաստում են բովանդակությունը պահանջվող ձևով վերարտադրելու, ինքնուրույն դատողություններով ու եզրահանգումներով շարադրանքը զուգորդելու կարողության զարգացմանը:Այստեղ մեծ է ուսուցչի դերը:Բնագրերն ընտրելիս (հատկապես ավագ դպրոցի) նա առաջին հերթին նկատի պետք է առնի այն հանգամանքը, որ դրանք առնչվեն տվյալ տարվա գրականության ծրագրով նախատեսված հեղինակների կենսագրության հետաքրքրաշարժ ու հուզումնալից փաստերին, նրանց մասին այլ մեծերի արտահայտած տպավորություններին ու գնահատմանը: Նման նյութերը, իմ կարծիքով, կնպաստեն սովորողների գեղագիտական, բարոյագիտական ճաշակի զարգացմանը, ինչպես նաև ազգային արժանապատվության գիտակցմանը համամարդկային տեսանկյունից:

Այսպիսով՝ փոխադրությունը ներկայացնում է

1) լեզվական գիտելիքների փոխանցումը և ձևավորումը,

2) յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների ու կարողունակությունների ձևավորումը:[1]

---

[1] ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌԻ («ԱՆԳԼԵՐԵՆ», «ԳԵՐՄԱՆԵՐԵՆ», «ՖՐԱՆՍԵՐԵՆ» ԵՎ «ՌՈՒՍԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ 2-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ) ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ
(5. **Օտար լեզուների դասավանդման** նպատակին հասնելու ուղիները)

Փոխադրության բազմաթիվ տեսակներ կան ,բայց դրանցից ոչ բոլորն են կիրառվում:Նշենք դրանցից մի քանիսը.

1. Պատմողական բնույթի մանրամասն փոխադրություն

Այս տեսակը տրվում է բոլոր դասարաններում: Ուսուցիչն ընթերցում է բնագիրը, աշակերտների ակտիվ մասնակցությամբ մշակում այն, տեքստի բովանդակության մասին անցկացնում համառոտ զրույց և հանձնարարում գրել: Սա փոխադրության ամենատարածված և ամենաշատը կիրառվող տեսակն է :

2. Պատմողական բնույթի հակիրճ փոխադրություն

Տրվում է բոլոր դասարաններում, հիմնականում՝ ուսուցողական: Ընտրվում է համեմատաբար ծավալուն բնագիր, որում քիչ են երկրորդական նշանակության դեպքերն ու դեմքերը: Ուսուցիչը կարդում է նյութը, բացատրում անծանոթ բառերն ու բառակապակցությունները, անփոփոխ ձևով, առանց մանրամասների պատմել տալիս բնագրի բովանդակությունը և հանձնարարում գրել: Այս տեսակի փոխադրության նպատակն է աշակերտին վարժեցնել ամբողջի մեջ գլխավորը տեսնելու, իր միտքը սեղմ ու հակիրճ արտահայտելու այնպես, որ բնագրի սեղմումը չխաթարի նրա բովանդակությունը:Այս տեսակը գրելուն վարժված աշակերտը հեշտությամբ սովորում է պատմողական ծավալուն դասերը:

3. Ընտրովի փոխադրություն

Կարելի է օգտագործել աշակերտներին ծանոթ, հերոսների կյանքի ու գործունեության դրվագներով հարուստ բնագիր: Ընտրված բնագիրը ուսուցիչը ընթերցում է, բացատրում անծանոթ բառերն ու բառակապակցությունները և հանձնարարում գրել: Աշակերտներն ընտրում են բնագրի՝ իրենց համար առավել հետաքրքրական հատվածը, կազմում պլան և գրում:

4. Փոխադրություն քերականական հանձնարարականներով

Սույն փոխադրության նպատակն է աշակերտներին վարժեցնել ուսումնասիրած քերականական օրինաչափությունը սեփական խոսքում ճիշտ օգտագործելու, տրամաբանված և հետևողականորեն շարադրելու նյութը: Բնագիրն ընթերցելուց, անծանոթ բառերը բացատրելուց հետո ուսուցիչը հիշեցնում է անցած քերականական օրինաչափությունը: Այդ օրինաչափություններն առանձնացվում են բնագրում, և ուսուցիչը պահանջում է դրանք կիրառել գրավոր աշխատանքում: Խորհուրդ է տրվում ընտրել ոչ ծավալուն բնագրային հատված, որպեսզի հնարավորություն ընձեռվի մանրամասն

աշխատանք կազմակերպելու։Փոխադրության այս տեսակը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ կրկնելու անցած քերականական նյութը և ապահովել դրա հիմնավոր յուրացումը:

5. Բանավոր փոխադրություն

Այսպիսի փոխադրության նպատակն է աշակերտին վարժեցնել իր կամ ուրիշի կարդացածը տրամաբանված և հետևողականորեն, կապակցված բանավոր վերարտադրելուն։ Փոխադրության այս տեսակը մեծապես նպաստում է աշակերտների հիշողության, խոսելու, պատմելու կարողությունների զարգացմանը, հարստացնում նրանց բառապաշարը, խոսքը դարձնում ավելի տպավորիչ ու հուզական։ Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել բնագրի գեղեցիկ և ճիշտ արտահայտություններն ու բառերը տեղին և գիտակցված օգտագործելու կարողությունների մշակմանը։

6. Փոխադրություն-թարգմանություն

Փոխադրության այս տեսակը մեզանում, ցավոք, քիչ է օգտագործվում, այնինչ դա մեծապես նպաստում է աշակերտի բառապաշարի հարստացմանն ու խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը։ Ուսուցիչը կարդում է ռուսերեն բնագիրը, գրատախտակին գրում արտահայտությունները, բացատրում և աշակերտների ուշադրությունը հրավիրում դրանց ճիշտ օգտագործման վրա։ Այնուհետև աշակերտների մասնակցությամբ կազմում է պլան, հայերեն պատմել տալիս բնագրի բովանդակությունը և հանձնարարում գրել։ Աշակերտներին թույլատրվում է օգտվել բառարաններից։

7. Ստեղծագործական փոխադրություն

Փոխադրության այս տեսակը ենթադրում է անծանոթ պատմվածքի շարունակում և վերնագրում,նոր դրվագներով և հերոսներով հարստացում,սեփական վերաբերմունքի և գնահատականի գրավոր արտահայտում։Ուսուցիչը կարող է նաև ցուցադրել համեմատաբար մատչելի սյուժետային նկար և պահանջել գրել կամ պատմել նրա մասին։Փոխադրության այս տեսակը ես անցկացնում եմ միայն այն ժամանակ,երբ աշակերտներն արդեն վարժվել են պատմողական բնույթի փոխադրություն գրելուն և կարող են ինքնուրույն եզրահանգումներ կատարել կամ կանխատեսել ու հորինել պատմվածքի ավարտը։Այս տեսակը ապահովում է նաև փոխադրությունից շարադրություն սահուն անցումը։Նպատակահարմար է անցկացնել 7-12-րդ դասարաններում:

1.2 Անցկացումը:

Փոխադրությունները լինում են ընթացիկ (ուսուցողական) և թեմատիկ (ստուգողական):

Ինչպես ամեն մի ընթացիկ գրավոր աշխատանքի, այնպես էլ ընթացիկ փոխադրության արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի նախապատրաստական աշխատանքից:

Ուսուցիչը ընթացիկ փոխադրության նյութը դասարանում կարդում է երկու անգամ՝ պահպանելով ուղղախոսության բոլոր օրինաչափություններն ու կանոնները: Ապա բացատրում է անծանոթ և դժվար ուղղագրություն ունեցող բառերը: Այդ բառերը գրվում են գրատախտակին և հանձնարարվում, որ դրանք աշակերտներն օգտագործեն իրենց գրավոր աշխատանքում:

Բառերի բացատրությունից հետո սովորողների հետ համագործակցային մեթոդների կիրառմամբ մշակվում է բնագիրը, կազմվում պլան և գրվում գրատախտակին: Այնուհետև մեկ-երկու աշակերտ պատմում են նյութը, որից հետո բոլորը սկսում են գրել:

Պետք է նշել, որ ժողովածուի պլանները, որոնք կազմված են երկու եղանակով՝ հարցական և անվանական նախադասություններով, ավելի շատ ուղեցույցի դեր են կատարում, քանի որ դրանք կազմվում են աշակերտների ակտիվ մասնակցությամբ:

Խորհուրդ է տրվում, եթե նյութը առավել շատ նկարագրական է, պլան կազմել ընդարձակ ձևով, որպեսզի այն ընդգրկի ոչ միայն նյութի բովանդակությունը, այլև մանրամասնություններ: IX դասարանների բնագրերից ոչ բոլորն ունեն պլաններ: Նման բնագրերի պլաններից 1–2-ը սկզբում կազմում են սովորողներն ուսուցչի ուղղորդմամբ, ապա՝ համագործակցային եղանակով (խմբերով), իսկ հետագայում յուրաքանչյուր սովորող՝ ինքնուրույն:

IX դասարանում գրատախտակին գրելիք բառացանկերը ընդգծված չեն: Դրանց ընտրությունը թողնված է ուսուցչի հայեցողությանը՝ ելնելով դասարանի համակազմի գիտելիքների պաշարից ու կարողություններից:

Ուսուցողական փոխադրությունները կարելի է նաև անցկացնել այլ եղանակներով:Ասենք բովանդակության պարզ շարադրանք հանձնարարելու փոխարեն նույն նյութի վերաբերյալ հանձնարարել տարբեր առաջադրանքներ:Այս դեպքում կիրառվում

է խմբային աշխատանք:Ամեն խմբի առջև դրվում է մեկ որոշակի պահանջ,ասենք՝

1-ին խումբ.տեքստը բաժանել մասերի,դրանց համար պլան և հարցեր կազմել

2-րդ խումբ.բովանդակությունը վերարտադրել պարզ նախադասություններով

3-րդ խումբ. նոր հերոս ներմուծել և շարունակել պատմությունը

4-րդ խումբ.նոր ընթացք տալ դեպքերին

5-րդ խումբ.տեքստը հարստացնել երկխոսություններով

6-րդ խումբ.տեքստի բովանդակությունը վերարտադրել որպես նամակ

7-րդ խումբ.գրել կարծիք կարդացածի մասին

Նման խմբեր կազմելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների կարողությունները :Այս դեպքում կարևոր է նաև,որ փոխադրության նյութը լինի ոչ ծավալուն,բայց հարուստ դեպքերով,որպեսզի հնարավոր լինի նոր հերոս ներմուծել կամ դեպքերի նոր զարգացում մշակել:Երբ յուրաքանչյուր խումբ վերջացնում է իր աշխատանքը և ներկայացնում,կարելի է սկսել խմբագրական և սրբագրական աշխատանքները:Աշակերտները կարդում են միմյանց գրածները,կատարում լրացումներ կամ փոփոխություններ,հետո նոր միայն արտագրում տետրերում:Ուսուցողական փոխադրությունները կարելի է չգնահատել.նշել միայն թույլ տված վրիպումները,ուժեղ և թույլ կողմերը:Այսպես ուսուցիչը ապահովում է դրական տրամադրվածություն ցանկացած գրավոր աշխատանքի հանդեպ:

Ճիշտ է,փոխադրություն գրելու ընդունված մեթոդը դասարանում տեքստը, հատվածը կարդալը, քննարկելը, պլան կազմելը և շարադրելն է: Տարիներ շարունակ դպրոցում դասավանդելիս աշխատել եմ այդ սկզբունքով, բայց հանդիպել եմ դժվարությունների.լինում են բազմաթիվ աշակերտներ ,որոնք միայն լսելով դժվարանում են ընկալել տեքստը: Արդեն մի քանի տարի է՝ կիրառում եմ հետաքրքիր մեթոդ. փոխադրության տեքստը բազմացնում եմ՝ վերջում հավելելով անհասկանալի բառերի բացատրությունը, երբեմն տեքստը կրճատում եմ (հավելեմ՝ հաճախ հարկ է լինում փոխադրության դասագրքի նյութը նաև խմբագրել ու սրբագրել):Դրանք բաժանում եմ վերը նշված աշակերտներին ,ովքեր ,2 անգամ կարդալով, ինձ են վերադարձնում թղթերը:Դա տալիս է իր դրական արդյունքը.տեսողական հիշողություն ունեցող աշակերտները շատ լավ շարադրում են նյութը:

Փոխադրություններ հանձնարարում եմ նաև տանը: Հանձնարարում եմ , որ նրանք որոնեն, գտնեն ծրագրով ուսումնասիրվող որևէ հեղինակի արձակ կամ չափածո (էպիկական)՝ իրենց առանձնապես դուր եկած ստեղծագործություն և, համապատասխան ամբողջական հատված ընտրելով, ուշադիր կարդան, կազմեն պլան և փոխադրեն՝ սեփական

կարծիքն ու վերաբերմունքը դրսևորելով:Դա ևս տալիս է իր դրական արդյունքը՝ մղելով աշակերտին գրքեր կարդալու և գեղեցիկ ու արագ վերարտադրելու:

Բոլորովին այլ ձևով է անցկացվում թեմատիկ փոխադրությունը:

Քանի որ այդ դեպքում ստուգվում են աշակերտների՝ նյութը պլանավորելու, շարադրելու, արդեն սովորած քերականական օրինաչափությունները գրավոր խոսքի մեջ կիրառելու կարողությունները, ապա ուսուցիչը նյութը կարդում է երկու անգամ, աշակերտներին բացատրում անծանոթ բառերը, այնուհետև հանձնարարում գրել: Աշակերտներն իրենք են կազմում փոխադրության պլանը:

Հանձնարարելի է, որ ուսուցիչը հատուկ ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ աշակերտները սոսկ մեխանիկորեն չվերարտադրեն փոխադրության նյութը, այլ դրանում արտահայտեն սեփական կարծիքն ու վերաբերմունքը:Ինձ համար անփոփոխ պայման է շարադրանքը եզրակացությամբ ավարտելը, որպեսզի հղկվեն, մշակվեն աշակերտների գրավոր խոսքը, դատողական ունակությունները, և որպես արդյունք՝ փոխադրությունից շարադրություն գրելու անցումը հարթ ու հեշտ լինի: Մայրենիին ավելի լավ տիրապետող սաներս կարող են դասարանում լսած կամ կարդացած նյութի մասին ավելի ծավալուն եզրակացություն-շարադրանք գրել, ներկայացնել դասընկերների ուշադրությանը:

Գրավորների ստուգման ժամանակ ուսուցիչը, բացի ուղղագրական և կետադրական սխալներից, պարտադիր պիտի հաշվի առնի 3-րդ սյունակի պահանջները և վերջնական գնահատումը կատարի միջին թվաբանականով՝ թույլ տված սխալների քանակով: Գաղտնիք չէ, որ լինում են բացառիկ աշակերտներ, որոնք ցուցաբերում են ստեղծագործական առանձնահատուկ ձիրք, սակայն չունեն գրագիտության բարձր մակարդակ: Նման դեպքերում ընդհանուր գնահատականին, որպես խրախուսանքի միջոց, հավելում եմ 1–2 նիշ:

Այսպիսով,փոխադրության անցկացման բազմաթիվ ձևեր կիրառելով՝ ուսուցիչը աշակերտին պետք է մղի ինքնազարգացման և ինքնակատարելագործման ,և փոխադրություն գրելը աշակերտի համար պիտի դառնա ոչ թե տաժանակիր,այլ սիրված աշխատանք:

ԳԼՈՒԽ 2
Շարադրություն.

2.1. Տեսակները:

Ստեղծագործական շարադրությունները կարևոր դեր են խաղում աշակերտների գրավոր ու բանավոր խոսքի զարգացման, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման,խոսքի մշակույթի կատարելագործման գործում:

Դպրոցականներին օգնելու և կողմնորոշելու, նրանց ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար թեև հրատարակվել են շարադրությունների մի քանի ժողովածուներ, բայց արմատապես և կտրուկ չեն փոխում վիճակը.աշակերտները շարունակում են դժվարանալ :

Ամենից առաջ նշենք, որ ստեղծագործական շարադրություններն ըստ բնույթի լինում են երեք տեսակ՝ *պատմողական, նկարագրական և դատողական*:

Ամենահեշտը և տարածվածը ***պատմողականն շարադրությունն*** է, որի մեջ պատմվում է որևէ դեպքի, երևույթի մասին, որն ունենում է *հաղորդման սկիզբ, զարգացում և ավարտ*: Աշակերտը պետք է վարժվի անկաշկանդ գրելու իր հետ կատարվածի մասին, պարզ, մատչելի ու հստակ շարադրի իր տեսածն ու լսածը, զգացածն ու ապրածը :Այսպիսի շարադրություն գրելուն նախապատրաստվելու համար կարելի է լայնորոն օգտագործել ինչպես դասագրքերի, այնպես էլ արտադասարանական ընթերցանության նյութերի հնարավորությունները :Սովորողները նախ պետք է պատմեն, ապա նոր միայն փորձեն շարադրել՝ իրենց հեր կապված հերաքրքրական դեպքի մասին:

Նկարագրական շարադրությունն ունի այլ կառուցվածք. սկզբում հաղորդվում են նկարագրվող երևույթից կամ առարկայից ստացած տպավորությունները, ապա ցույց են տրվում դրանց ամենաբնորոշ ու էական հատկանիշները, իսկ վերջում տրվում է գնահատականը կամ եզրակացությունը: Նկարագրական շարադրություն գրելու համար աշակերտները պետք է ուշադիր ու մանրամասն դիտեն իրենց շրջապատը, առարկաներն ու երևույթները, նկատեն բնության փոփոխությունները: Այդ ամենը գեղեցիկ ու արտահայտիչ վերարտադրելու, նկարագրելու համար սովորողները պետք է օգտագործեն համապատասխան մակդիրներ, զանազան համեմատություններ ու փոխաբերություններ:

Նկարագրական-պատմողական շարադրության մի տեսակ է *նկարի շուրջ տրվող աշխատանքը,* որը մեծապես նպաստում է նկար կարդալու, արժևորելու նկարի մեջ

պատկերված երևույթները: Հետաքրքրական է նաև *դիտած կինոնկարի վերաբերյալ շարադրություն գրելը,* որը մեր դպրոցներում, ցավոք, լայն տարածում չի գտել:

Դատողական շարադրությունը կառուցվածքով տարբերվում է առաջիններից: Բաղկացած պետք է լինի հետևյալ մասերից՝ ընդհանուր վիճակը բացահայտող մաս՝ դրույթ, ապացույցներ պարունակող մաս և եզրակացություններ:Դատողական շարադրություն գրելը համեմատաբար դժվար է և տրվում է բարձր դասարաններում(օրինակ՝ հայրենասիրության, հերոսության, իսկական մարդ կոչվելու, ամենակարող լինելու, հացի պաշտամունքի և այլնի մասին):Այսպիսի շարադրություն գրողը պետք է փաստերով ապացուցի իր առաջ քաշած դրույթի ճշմարտացիությունը: Դատողական շարադրություն գրողը պետք է մտքում ունենա շարադրանքի պլանը, հստակ պատկերացնի նրա *սկիզբը, ընթացքը և ավարտը* , որոնք շարադրանքի կարևոր փուլերն են: Դատողական շարադրություններ կարելի է գրել սովորողների ձգտումների, երազանքների, մասնագիտության ընտրության, ինչպես նաև հայրենասիրության, հերոսության, աշխատասիրության, բարեկամության շուրջ:

Նախքան շարադրությունը ուսուցիչը պետք է նմանօրինակ շարադրություններ կարդա, ցույց տա նրբություններն ու պահանջները: Այդ բանին մեծապես կարող են օգնել նաև տրված սկիզբով կամ վերջով գրվող շարադրությունները: Օրինակ՝ ուսուցիչը կարող է տալ շարադրության *սկիզբը* և պահանջել, որ աշակերտներից յուրաքանչյուրը յուրովի շարունակի այդ միտքը:Այս աշխատանքը նման է ստեղծագործական փոխադրությանը:

Մինչև շարադրություն գրել հանձնարարելը ուսուցիչը պետք է հանգամանորեն բացատրի,պարզաբանի դրա հետ կապված բոլոր մանրամասնությունները և նրբությունները,նշի այն նյութերը ,աղբյուրները ,որոնց օգտագործմամբ հեշտ կլինի գրել

շարադրություն,տա շարադրության մոտավոր ուրվագիծը ,պլանը կամ հանգուցային հարցերը:Ցանկալի կլինի ,որ ուսուցիչը սկզբնական շրջանում շարադրություններ հանձնարարելիս նմանատիպ շարադրություն կարդա կամ հիշեցնի ,ծանոթացնի համապատասխան գրական ընթերցանության նյութերին:

Շարադրության մի տեսակն էլ ստեղծվում է տրված բառերով ու բառակապակցություններով: Ուսուցիչը նախօրոք թելադրում է տվյալ շարադրության նյութին առնչվող 12-15 բառ ու բառակապակցություն և պահանջում գրել շարադրություն:

Կիրառելի է նաև նամակի ձևով գրվող շարադրությունը,ինչը հնարավորություն է տալիս աշակերտին ամփոփ ներկայացնելու, վերլուծելու գրողի ստեղծագործությունը,արտահայտելու սեփական հույզերն ու զգացմունքները, ձևավորում է սովորողների՝ տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտությունները և կարողությունները:[2]

5-6-րդ դասարաններում կարելի է հանձնարարել շարադրություններ գրել մայրիկի,տատիկի,առաջին ուսուցչուհու ,տարվա եղանակների մասին,իսկ ավագ դպրոցի աշակերտներին՝ իրենց երազանքների, ապագայի, ընկերասիրության,հայրենասիրության վերաբերյալ իրենց պատկերացումների մասին:

Ստեղծագործական շարադրություն գրելու համար անհրաժեշտ է մտքում ընդհանուր գծերով ձևավորել ասելիքը՝ ուրվագծելով սկիզբը, հիմնամասը և ավարտը: Կարելի է նաև նշումներով համակարգել մտածածը: Այնուհետև դանդաղ, մտածելով ու պատկերացնելով շարադրվում է ասելիքը: Շարադրելուց որոշ ժամանակ անց պետք է ընթերցել գրվածը՝ արդեն խմբագրական մոտեցմամբ:Անհրաժեշտ է ուշադիր լինել, որ շարադրանքում չլինեն բառային անհարկի կրկնություններ կամ պարզապես ավելորդ բառեր, անհաջող ձևակերպումներ, ոչ ճիշտ բնորոշումներ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակային,պատճառահետևանքային կապերին, տրամաբանական համաչափ ընթացքին,որպեսզի շարադրանքում չլինեն անհամապատասխանություններ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև քերականական ժամանակների համապատասխանությանը, շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին, ուղղագրությանն ու կետադրությանը: Չափից դուրս երկար նախադասությունները պետք է կրճատել կամ վերջակետերով բաժանել իմաստային ինքնուրույնություն ունեցող հատվածների: Կարելի է որոնել ու գտնել թեմային համահունչ ստեղծագործություններ կամ թևավոր խոսքեր և մեջբերումներ կատարել, սակայն դա լավ շարադրություն գրելու պարտադիր պայման չէ: Հատկապես հարկ չկա մի քանի ծավալուն մեջբերումներ կատարելու տարբեր բանաստեղծություններից, որոնք անընդհատ ընդմիջում են շարադրանքը և ընդգծում շարադրություն գրողի ասելիքի աղքատությունը: Կարելի է ընտրել մեկ դիպուկ բնաբան, որը

[2] ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌԻ («ԱՆԳԼԵՐԵՆ», «ԳԵՐՄԱՆԵՐԵՆ», «ՖՐԱՆՍԵՐԵՆ» ԵՎ «ՌՈՒՍԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ 2-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ) ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ
(ԲԱԺԻՆ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ)

կարող է լինել առած կամ ասացվածք, թևավոր խոսք, բանաստեղծության կամ արձակ ստեղծագործության տող: Եթե ժամանակ կա, շարադրություն գրողը պետք է իր գրածն ընթերցի գրելուց մի քանի օր հետո: Այդ դեպքում սեփական սխալները շուտ են նկատվում, միանգամից աչքի են զարնում այնպիսի թերություններ, որոնք շարադրելուց անմիջապես հետո կարդալիս զգալի չէին: Երբ ճիշտ և տեղին գործածվի բարեկիրթ խոսքը՝ բնորոշ բառերով և արտահայտություններով, շրջապատում կհասկանան, որ գործ ունեն կիրթ և դաստիարակված մարդու հետ:[3]

Շարադրության առանձին տեսակ է վերլուծական շարադրությունը: Վերլուծական շարադրությունները գրվում են որևէ գրողի ստեղծագործության կամ ստեղծագործությունների վերաբերյալ: Կարող են լինել նաև համեմատական բնույթի շարադրություններ, որոնցում զուգադրվում ու վերլուծվում են տարբեր գրողների այնպիսի ստեղծագործություններ, որոնք գաղափարական ընդհանրություններ ունեն: Ավելի հաճախ շարադրությունները նվիրված են լինում ոչ թե ամբողջ ստեղծագործության վերլուծությանը, այլ որևէ կոնկրետ հարցի քննությանը: Վերլուծական շարադրության նյութն առաջին հերթին գրական այն երկն է,որի վերաբերյալ պետք է գրվի շարադրությունը, սակայն անհրաժեշտ է նաև այլ նյութերի իմացություն: Շարադրություն գրողը պետք է ծանոթ լինի նաև տվյալ հեղինակի ուրիշ գործերի, պատկերացում ունենա այն ժամանակաշրջանի մասին,որի ընթացքում ապրել և ստեղծագործել է հեղինակը, իմանա գրական այն ուղղության առանձնահատկությունները, որի ներկայացուցիչն է հեղինակը(ռոմանտիզմ, ռեալիզմ և այլն):

Վերլուծական շարադրությունը գրվում է որոշակի սկզբունքներով, որոնց պահպանումը նպաստում է շարադրանքի իմաստային ամբողջականությանը: Շարադրություն գրողը պետք է կազմի շարադրանքի պլան: Պլանում ներկայացված հարցադրումների պատասխաններով էլ ընդհանուր առմամբ ձևավորվում է ամբողջ տեքստը:

ա) Նախ անհրաժեշտ է ներկայացնել որոշ տեղեկություններ այն մասին, թե որ ժամանակաշրջանում է ապրել ու ստեղծագործել վերլուծվող ստեղծագործության հեղինակը, գրական որ ուղղության հետևորդ է եղել:

բ) Նշել տվյալ հեղինակի առավել հայտնի ստեղծագործություններից մի քանիսը. ցանկալի է, որ դա կատարվի թեմատիկ բաժանումով, այսինքն՝խմբավորված նշվեն

[3] Գյուրջինյան Դ.,Բարեկիրթ հայերենի բառարան, Երևան

հայրենասիրական, խոհափիլիսոփայական, սիրային և մյուս թեմաներով գրված գործերը: գ) Այնուհետև անդրադառնալ վերլուծվող երկի ստեղծման ժամանակաշրջանին: Եթե ստեղծման ժամանակը էական դեր է ունեցել, ապա պետք է նշել նաև, թե այն ինչ ազդեցություն է թողել գրական տվյալ երկի վրա:

դ) Սրանից հետո խոսվում է այն մասին, թե ինչ բովանդակություն ունի վերլուծվող երկը, և շատ համառոտ ներկայացվում է սյուժեն:

ե) Սրա հիման վրա էլ վերլուծաբար ներկայացվում են ստեղծագործության գլխավոր գաղափարը, հեղինակի առաջ քաշած խնդիրները, դրանց տրվող լուծումները:

զ) Այս վերլուծությունից հետո ներկայացվում են տվյալ ստեղծագործության մեջ գործածված գեղարվեստական միջոցները (կերպարներ և գործողություններ, պատկերավորման միջոցներ և այլն):

Է) Վերջում շարադրության հեղինակն ամփոփում է ասելիքը, գնահատում վերլուծվող երկը, կատարում եզրահանգումներ:

Շարադրությունը չպետք է սկսել կաղապարված ներածականներով, որոնք տարածված ու ծամծմված են: Պետք է խուսափել ճոռոմ ու վերամբարձ բնորոշումներից, չափից շատ մակդիրների գործածումից, անհարկի ու կեղծ հուզականությունից: Պետք է խուսափել նաև ավելորդ բառեր գործածելուց: Անհրաժեշտ է վերլուծել, այլ ոչ թե վերապատմել ստեղծագործությունը:Մանավանդ չպետք է կատարել շատ և ծավալուն մեջբերումներ: Չափից շատ մեջբերումները սեփական ասելիքի բացակայության ապացույցն են: Նախադասությունները, հատկապես բարդ նախադասությունները պետք է կազմել հետևողականորեն և սկսած միտքը հասցնել ավարտին:

Անհրաժեշտ է գործածել այնպիսի բառեր, որոնց իմաստները գիտեք. այլապես գրվածքը կարող է անիմաստ, նույնիսկ ծիծաղելի ստացվել: Կարևոր և պարտադիր է ուղղագրական ու կետադրական կանոնների իմացությունը: Թեկուզ գեղեցիկ շարադրված, բայց ուղղագրական և կետադրական սխալներով լի շարադրանքը լավ տպավորություն չի թողնի:

2.2. Անցկացումը:

Շարադրությունները, ինչպես փոխադրությունները, ևս լինում են ուսուցողական/ընթացիկ/ և ստուգողական /թեմատիկ/:

Շարադրությունը պիտի գրվի դասարանում՝ուսուցչի և աշակերտների համատեղ և մանրակրկիտ աշխատանքից հետո:Մտքերը գրավոր շարադրելը դժվար գործ է ,և սրան աշակերտին պիտի վարժեցնել:Միայն վերնագիր տալու և տանը գրելու հանձնարարությունը դրան չվարժված աշակերտին ստիպում է դիմել մեծահասակների օգնությանը,որն ավարտվում է նրանով,որ մեկ ուրիշն է գրում նրա փոխարեն:

Ուսուցողական շարադրությունը կարելի է գրել ըստ պլանի,ըստ տրված պարզ նախադասությունների ու բառերի,գրական երկից սովորած պատկերավոր արտահայտությունների: 5-6- րդ դասարաններում ստուգողական բնույթի շարադրանքներ տալը նպատակահարմար չէ:

Եթե ուսուցիչը դասարանը նոր է ընդունել,և աշակերտները դեռ վարժված չեն իրենց մտքերը շարադրելուն,ապա աշակերտներին պետք է նախապատրաստել:Դրա լավագույն ձևը նախորդ դասաժամերին տրվող 3-5 բոպե տևողությամբ շարադրանքներն են,որոնք միավորային գնահատման չեն ենթարկվում:

Դժվարությամբ ընկալող սովորողին կարելի է առաջարկել,որ նախ մտովի պատկերացնի թեման այնպես,կարծես կինոնկար է դիտում,հետո նոր մտքում պատկերածը շարադրի բառերով:Կարելի է նաև թուղթ և գունավոր մատիտներ տալ և առաջարկել նկարել գլխում ծնված պատկերները,ապա նկարածը պատմել բառերով:

Ամենից դժվարը շարադրանքի սկիզբը գտնելն է : Օգնելու նպատակով կարելի է մի քանի աշակերտի կարդալ տալ իրենց գրածի սկիզբը,կամ էլ այդ աշակերտի հետ մի քիչ զրուցել, մինչև որ նա գտնի իր շարադրանքի առաջին նախադասությունը:

Կարևոր է ,որ հանձնարարվելիք շարադրության նյութը լինի սրտամոտ ու հարազատ,համապատասխան տվյալ տարիքին:Պետք է տրվեն այնպիսի ստեղծագործական շարադրություններ,որ աշակերտը կարողանա հիմնավորված եզրահանգումներ անել,պատկերավոր ու գեղեցիկ նկարագրել իրենց տեսածն ու զգացածը:Շարադրությունը պետք է ամբողջական լինի,նկարագրվող երևույթների մեջ փոխադարձ և ներքին տրամաբանական կապ պիտի լինի:Շատ կարևոր է ստեղծագործական շարադրությունների ստուգումն ու վերլուծությունը դասարանում: Ուսուցիչը պետք է ոչ միայն ուղղագրական ու կետադրական սխալները ցույց տա,այլև ոճական ու մտքի սխալները:Ուսուցիչը պետք է նշի յուրաքանչյուր շարադրության ուժեղ և թույլ կողմերը,դասարանում կարդա լավագույն շարադրությունները:

Եզրակացություն

Այսպիսով, շարադրություն և փոխադրություն գրելը աշակերտի համար կդառնա հետաքրքիր և ցանկալի, եթե նա հասկանա, որ դրանք այնքան էլ բարդ աշխատանք չեն, և ինքը կարող է ուսումնասիրել, միավորել, տարանջատել, դասակարգել: Իսկ դա մեծապես կախված է ուսուցչի վարպետությունից, նրա՝ անընդհատ ստեղծագործելու և շարադրություն և փոխադրություն անցկացնելու նոր մեթոդներ գտնելու ձիրքից :Ճիշտ է,շարադրություն գրողը ինքը պետք է օժտված լինի ստեղծագործական կարողություններով,բայց ուսուցչի աշխատանքը ևս տալիս է ցանկալի արդյունք:Նպատակին հասնելու համար ուսուցիչը աշակերտի մեջ պիտի սերմանի հետևյալ գաղափարները.

1.Իսկական ոգեշնչումը ձեռք է բերվում գրելու միջոցով:

Գրի՛ր: Գրելու հենց միայն ֆիզիկական գործընթացն արդեն ազատություն կտա երևակայությանդ: Այս առումով գրելը պարելու նման է, երբ նրբագեղությունն առաջ է գալիս շարժումների հետ:

Գոնե սկզբնական շրջանում գրելը հեշտ է: Բառը բառի հետևից հոսում է... Ոգեշնչումը սովորաբար գալիս է նախադասության կեսից: Մուսադ կերգի, բայց միայն որպես հոսող թանաքի ուղեկից:

2. Սիրածդ գրողի գիրքը բաց վիճակում թող միշտ կողքիդ լինի ստեղծագործելիս՝ ոգեշնչման նպատակով: Մի վախեցիր այս գործում ինքդ քեզ կորցնելուց: Անկախ նրանից, թե մեկ ուրիշի արվեստը որքանով ազդեցիկ կլինի, քո անհատականությունը չի տուժի: Քո ձայնը կխառնվի այլոց ձայնին ու հետագայում ավելի հստակ կդառնա նրանց միջոցով: Բայց դու միշտ էլ կմնաս դու:

3.Սիրածդ գրականության հավաքածուն կազմի՛ր:

Մի նոթատետր վերցրու, և մեջը քեզ դուր եկած գրքերից հետաքրքիր գրված հատվածներ, հաջող մտքեր գրիր: Դրանք կոգեշնչեն քեզ գրելու:

4.Մնվի՛ր բառերով:

Մի լավ բացատրական բառարան ճարիր՝ հնարավորինս մեծ: Ապա հարմար գրքակալ պատրաստիր կամ գնիր, որն ամբողջ ժամանակ բառարանը բաց վիճակում կպահի: Այս գանձը դիր գրասեղանիդ վրա և հաճախ կարդա:

5. Տիրապետի՛ր փոխաբերությանը: Բայց մի՛ չարաշահիր այն:

Նորություն չէ, որ փոխաբերությունը ոճական կարևորագույն հնարներից է, որ զարդարում ու հարստացնում է լեզուն, համ ու հոտ տալիս խոսքին: Բայց այն կիրառելն էլ համապատասխան հմտություն է պահանջում: Խուսափի՛ր սարքովի քնարական զարդարանքերից ու էժանագին, մակերեսային փոխաբերություններից:

6.Խուսափի՛ր շաբլոն դարձվածքներից ու ծեծված արտահայտություններից:

Նման արտահայտություններն արդեն այնքան են «մաշվել», որ գրեթե կորցրել են իրենց ուժը: Եթե ընթերցողը կարողանա կանխատեսել, թե ինչպես է ավարտվելու գրածդ արտահայտությունը, ուրեմն համարիր, որ կորած ես:

Պետք է հիշել, որ բոլոր գործերում հմտանում են շատ աշխատելով, ուստի շարադրություն և փոխադրություն գրելու մեջ էլ հմտանում են դրանք գրելով, այսինքն՝ ստեղծագործական ձիրքը զարգացնելով, շատ ընթերցել՝ ընդհանրացնելով, համեմատելով, վերլուծելով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուրջինյան Դ.,Բարեկիրթ հայերենի բառարան, Երևան, Էդիթ Պրինտ, 2021
2. Եզեկյան Լ.,Ռ. Սաքապետոյան <<Հայոց լեզու -12>> Երևան -2011
3. Ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց, Երևան, 2007
4. Փոխադրության նյութերի ժողովածու IV-X դասարանների համար
5. Օհանյան Գ., <<Ստեղծագործական շարադրությունների ժողովածու>> Երևան, 2005
6. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180001